ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«02» մայիս 2019 թվականի N: 148-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 2 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգի» 9-րդ կետի 10-րդ ենթակետի դրույթով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 26-ի թիվ 2 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի

2019 թվականի Դեկտեմբերի 02 ի

N 148 - Ա որոշման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Գյումրի 26. 04. 2019 թ.

ԿԱՅԱՑԱԾ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-ԻՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝	Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝	Վ. ՍԵՐՈԲՅԱՆԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝	Խ. ԽՆՁՐՑՅԱՆԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝	Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆԻ
	Ա. ՄԱՄՅԱՆԻ

Նիստին չի մասնակցել հանձնաժողովի անդամ՝ Գ. Բաղդասարյանը:

Հանձնաժողովի նիստին մասնակցել են <<Նիկ Թամ>>, <<Մուշ Արմեն>> և <<Տրանս Ակնթարթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ներկայացուցիչները:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին հասցեագրված <<Նիկ Թամ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի խնդրանքը Գյումրի-Ջաջուռավան-Կրաշեն- Մեծ Սարիար և հետադարձ /N 07-009/ ավտոբուսային երթուղին ընկերությանը ժամանակավոր սպասարկման թույլտվություն տալու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին հասցեագրված <<Մուշ Արմեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի խնդրանքը

Հայկավան-Գյումրի և հետադարձ /N 07-013/ միկրոավտոբուսային երթուղին ընկերության կողմից ժամանակավոր սպասարկման թույլտվություն տալու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին հասցեագրված <<Տրանս Ակնթարթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի խնդրանքը Գյումրի-Վարդաքար-Փանիկ-Մեղրաշեն-Գեղանիստ և հետադարձ /N 07-046/ միկրոավտոբուսային երթուղին ընկերությանը ժամանակավոր սպասարկման թույլտվություն տալու մասին:

/Զեկ. Խ. Խնձրցյան/

Լ Ս Ե Ց Ի Ն 1. - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին հասցեագրված <<Նիկ Թամ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի խնդրանքը Գյումրի-Ջաջուռավան-Կրաշեն- Մեծ Սարիար և հետադարձ /N 07-009/ ավտոբուսային երթուղին ընկերության կողմից ժամանակավոր սպասարկման թույլտվություն տալու մասին:

/Զեկ. Խ. Խնձրցյան/

Զեկուցողը նշեց, որ Գյումրի-Ջաջուռավան-Կրաշեն- Մեծ Սարիար և հետադարձ /N 07-009/ ավտոբուսային երթուղին այժմ սպասարկվում է <<Նիկ Թամ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից: Ընկերության տնօրենը խնդրել է թույլատրել ժամանակավորապես՝ մինչև նոր մրցույթի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը, երթուղին նախկին մրցույթով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած ավտոբուսներով.սպասրկելու մասին:

Հանձնաժողովի նախագահ Վ. Գրիգորյանը առաջարկեց՝

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 62-րդ կետի 1-ին ենթակետի պահանջով թույլատրել <<Նիկ Թամ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը մինչև նոր մրցույթի անցկացումը և արդյունքների ամփոփումը ժամանակավորապես սպասարկելու Գյումրի-Ջաջուռավան-Կրաշեն- Մեծ Սարիար և հետադարձ /N 07-009/ ավտոբուսային երթուղին:

Առաջարկությունը քվեարկությամբ ընդունվել է՝ միաձայն:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 62-րդ կետի 1-ին ենթակետի հանձնաժողովը որոշեց, մինչև Գյումրի-Ջաջուռավան-Կրաշեն- Մեծ Սարիար և հետադարձ /N 07-009/ ավտոբուսային երթուղու սպասարկման նոր մրցույթի անցկացումը և արդյունքների ամփոփումը, <<Նիկ Թամ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, որպես մրցութային հանձնաժողովի կողմից ընտրված կազմակերպություն, լիազորելու ժամանակավորապես սպասարկելու Գյումրի-Ջաջուռավան-Կրաշեն- Մեծ Սարիար և հետադարձ /N 07-009/ ավտոբուսային երթուղին՝ նախկին մրցույթով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած ավտոբուսներով ու սպասարկման ժամկետ սահմանել մինչև Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի վերջնական ձևավորումը:

Առաջարկությունը քվեարկությամբ ընդունվել է՝ միաձայն:

ԼՍԵՑԻՆ - 2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին հասցեագրված <<Մուշ Արմեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի խնդրանքը Հայկավան-Գյումրի և հետադարձ /N 07-013/ միկրոավտոբուսային երթուղին ընկերությանը ժամանակավոր սպասարկման թույլտվություն տալու մասին:

/Զեկ. Խ. Խնձրցյան/

Զեկուցողը նշեց, որ Հայկավան-Գյումրի և հետադարձ /N 07-013/ միկրոավտոբուսային երթուղին այժմ սպասարկվում է <<Մուշ Արմեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից: Ընկերության տնօրենը խնդրել է թույլատրել ժամանակավորապես՝ մինչև նոր մրցույթի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը, երթուղին նախկին մրցույթով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած միկրոավտոբուսներով.սպասարկելու մասին:

Հանձնաժողովի նախագահ Վ. Գրիգորյանը առաջարկեց՝

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր

փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 62-րդ կետի 1-ին ենթակետի պահանջով թույլատրել <<Մուշ Արմեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը մինչև նոր մրցույթի անցկացումը և արդյունքների ամփոփումը ժամանակավորապես սպասարկելու Հայկավան-Գյումրի և հետադարձ /N 07-013/ միկրոավտոբուսային երթուղին:

Առաջարկությունը քվեարկությամբ ընդունվել է՝ միաձայն:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 62-րդ կետի 1-ին ենթակետի հանձնաժողովը որոշեց, մինչև Հայկավան-Գյումրի և հետադարձ /N 07-013/ միկրոավտոբուսային երթուղու սպասարկման նոր մրցույթի անցկացումը և արդյունքների ամփոփումը, <<Մուշ Արմեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, որպես մրցութային հանձնաժողովի կողմից ընտրված կազմակերպություն, լիազորելու ժամանակավորապես սպասարկելու Հայկավան-Գյումրի և հետադարձ /N 07-013/ միկրոավտոբուսային երթուղին նախկին մրցույթով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած միկրոավտոբուսներով ու սպասարկման ժամկետ սահմանել մինչև Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի վերջնական ձևավորումը:

Առաջարկությունը քվեարկությամբ ընդունվել է՝ միաձայն:

ԼՍԵՑԻՆ - 3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին հասցեագրված <<Տրանս Ակնթարթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի խնդրանքը Գյումրի-Վարդաքար-Փանիկ-Մեղրաշեն-Գեղանիստ և հետադարձ /N 07-046/ միկրոավտոբուսային երթուղին ընկերությանը ժամանակավոր սպասարկման թույլտվություն տալու մասին:

/Զեկ. Խ. Խնձրցյան/

Զեկուցողը նշեց, որ Գյումրի-Վարդաքար-Փանիկ-Մեղրաշեն-Գեղանիստ և հետադարձ /N 07-046/ միկրոավտոբուսային երթուղին այժմ սպասարկվում է <<Տրանս Ակնթարթ>>

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից: Ընկերության տնօրենը խնդրել է թույլատրել ժամանակավորապես՝ մինչև նոր մրցույթի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը, երթուղին նախկին մրցույթով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած միկրոավտոբուսներով.սպասարկելու մասին:

Հանձնաժողովի նախագահ Վ. Գրիգորյանը առաջարկեց՝

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 62-րդ կետի 1-ին ենթակետի պահանջով թույլատրել <<Տրանս Ակնթարթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը մինչև նոր մրցույթի անցկացումը և արդյունքների ամփոփումը ժամանակավորապես սպասարկելու Գյումրի-Վարդաքար-Փանիկ-Մեղրաշեն-Գեղանիստ և հետադարձ /N 07-046/ միկրոավտոբուսային երթուղին:

Առաջարկությունը քվեարկությամբ ընդունվել է՝ միաձայն:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 62-րդ կետի 1-ին ենթակետի հանձնաժողովը որոշեց, մինչև Գյումրի-Վարդաքար-Փանիկ-Մեղրաշեն-Գեղանիստ և հետադարձ /N 07-046/ միկրոավտոբուսային երթուղու սպասարկման նոր մրցույթի անցկացումը և արդյունքների ամփոփումը, <<Տրանս Ակնթարթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, որպես մրցութային հանձնաժողովի կողմից ընտրված կազմակերպություն, լիազորելու ժամանակավորապես սպասարկելու Գյումրի-Վարդաքար-Փանիկ-Մեղրաշեն-Գեղանիստ և հետադարձ /N 07-046/ միկրոավտոբուսային երթուղին նախկին մրցույթով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած միկրոավտոբուսներով ու սպասարկման ժամկետ սահմանել մինչև Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի վերջնական ձևավորումը:

Առաջարկությունը քվեարկությամբ ընդունվել է՝ միաձայն:

4. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 10-րդ ենթակետի, սույն արձանագրությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի հաստատմանը:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Վ. Գրիգորյան

անդամներ՝ Վ. Սերոբյան

Ա. Մարգարյան

Ա. Մամյան

քարտուղար՝ Խ.Խնձրցյան